

ԵՐԵՎԱՆԻ ՊՐԻՆՏԵՐՆԻ

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисть, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ղեւնդ աւագ քահանայ Խարազեան իր որդոց հետ միասին ցաւք արտի յայտ-
նում է աղբակներին եւ ծանօթներին իր անմոռանալի կնոջ

Ե Փ Ե Մ Ի Ը Ի Ը Ր Ը Զ Ե Ը Ն Ի

Սա՛նք եւ խնդրում է յարգել նրա յիշատակը, ներկայ լինելով հոգեհանգստին չարաթի-
յուխի 27-ին, երեկոյեան 7 ժամին: Յուզարկաւորութիւնը—կիրակի, յուլիսի 28-ին,
առաւօտեան 10 ժամին, դէպի Վանքի մայր եկեղեցին եւ այնտեղից Վերայի գերեզմա-
նատունը: 1—1

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Հետաքրքրական կարծիք.—Ներքին ՏԵՍՈՒ-
թիւն. Տանք գործողին արժանաւորութիւն.
Նամակ Ալեքսանդրօպօյի. Նամակ Զանգեզու-
րի գաւառից: Նամակ Խմբագրութեան. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պոլսի լրագրողներից. Նամակ
Գարեկապտանից. Արտաքին լուրեր.—ՀՅՈՒԱ-
ԳՐԻՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ-
ՍԻՐԱՅԱՆ. Հիւանդ մարդիկ:

ՀԵՏԱԲՐԲՈՒՄԱՆ ԿԱՐԾԻՔ

Հիւսիսգօթորսի բնագիտական ժողովում
պրոֆէսոր Տիգրէրտէզտ մի ճառ արտա-
սանեց, որ մեծ տպաւորութիւն գործեց
հասկանալիների վրա: Նա յայտնեց, որ
գիտական գործունէութեան մէջ երի-
տասարդական հասակը վճռական է
էական նշանակութիւն ունի: Օրինակներ
բերելով նա ցոյց տուեց, որ գիտական-
ների արած աւանդուածները գիտական արված
են նրանց երիտասարդական տարիներում:
Նիւտոն, Լիւնէյ, Բոքերտ Մայէր, Բեր-
ցելիուս, Վեյպլիյ իրանց նշանաւոր գիտե-
րը արել են 23—30 տարեկան հասակում:
Երիտասարդական տարիներում որոշվում են
կառավարչական գիտական գործունէու-
թեան գիտաւոր եւ էական ուղիները, իսկ
այնուհետեւ գիտական աւելի արբուն
հասակի կատարածը միայն լրացնում է,
նորացնում է, կատարելագործում է եւ
նորակացնում է ընդգծված ծրագիրը:
Անկախած գիտութիւնների պատմու-
թեան մէջ կարելի է գտնել մի շարք դէպ-

քեր, երբ գիտաւոր են արված եւ ոչ երի-
տասարդական հասակում, բայց ընդհան-
րապէս Տիգրէրտէզի կարծիքը ուղիղ է
եւ արժանի է առանձին ուշադրութեան:
Երիտասարդական հասակում, երբ գիտա-
կանի ուղիղը գրաւված է իր նախորդնե-
րի կատարած գործերի իւրացմամբ եւ
ընտելութեամբ, առաջ են դալիս նրա սե-
փական գիտական մտածողութեան ա-
ռանձնայատկութիւնները, նրա կասկած-
ները անցնալի վերաբերութեամբ եւ նրա
հեռանկարները նոր հայեցակէտերի վե-
րաբերութեամբ:

Եթէ աչքի առաջ ունենանք, որ նոյն
երիտասարդական տարիներում կազմա-
կերպվում է եւ գիտական ընաւորու-
թիւնը, մենք կը տեսնենք, որ արդարեւ
մեծ պարտականութիւն է ծանրանում
հասարակութեան եւ համալսարանական
չըջանների վրա: Սալ երիտասարդութեանը
միջոց արդիւնաւէտ եւ նպատակայարմար
կերպով անցկացնելու իր երիտասարդական
թանգագին տարիները, երբ կազմակերպ-
վում է գործողը եւ մտածողը:

Երիտասարդութեան համար պէտք է
բաց լինեն գիտութեան տաճարները: Նրա
շուրջը պէտք է տիրէ ազատ գիտական
ոգի: Հասարակութիւնը պէտք է ամեն
միջոց տալ, որ գիտական գործունէու-
թիւնը չը ձնչլի, չը սահմանափակվի եւ
երիտասարդ մարդը ստիպված չը լինի
թաղել իր վճռական տարիները անգոր-
ծութեան, խաղի եւ անբարոյական զուար-
ձութիւնների մէջ:

Հասարակութիւն, մտածիր քո ապագայ

մտածողների պատասխանատու տարիները
լաւ գործադրութեան մասին: Երիտա-
սարդներ, գնահատեցէք ձեր մատաղ ոյ-
ժերը, ձեր կազմակերպվող անձնաւորու-
թիւնը, ձեր խնդիրային մտածողութեան
թանգագին տարիները եւ ուղղեցէք նրանց
գիտութեան եւ հասարակական բարօրու-
թեան համար գործելու:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՆՔ ԳՐԻԳՈՐԻՆ ԱՐԺԱՆԱՌՈՒԹԻՒՆ

Կարգավոր «Մակի» № 139-ում «Գործողի
արժանաւորութիւնները» վերնագրով յօդուածը,
մենք ակամայ հառաչեցինք...

Տարաբարդաբար մեր մասսան այնքան զար-
գացած է, որ ինքն իրան առաջադիմէ: Չունի
հարուստ գրականութիւն, իր բոլոր խաւերում
տարածված մամուլ, որ նրանց միջոցով առաջ
գնալ Մենք այնքան ենք յետ մնացել, որ ա-
մեն մի չնչին գործող, ոյժ, պաշտօնեայ կարող
է մեզանում, ինչպէս շատ բան առաջ տանել,
այնպէս էլ շատ բան քանդել: Մեր շատ գիւ-
ղերում մի որ եւ է տանտէրի օգնական, եւ-
ստուլ կամ տանտէրի նոյն իրաւունքներն է
բանեցնում, ինչ մի բարձր պաշտօնեայ կարող
է բանեցնել: Առանց բացատրութեան, կարող
ենք ասել, ոչ ոք չի գործող ժողովրդին օգնե-
լու զազափարով ոգեւորված չէ ստանձնում
պաշտօն, թէ եւ դրանցից շատ շատերը կամ ան-
վարձ են ծառայում կամ շատ քիչն ուսմիկ են
ստանում, այլ լոկ իրանց գրգռանքները լցնելու հա-
մար: Մենք տեսնում ենք, որ ձրի կամ տարե-
կան 100 ռուբլի ստացող տանտէրի օգնա-
կանը մի քանի տարուց յետոյ տոկոսով փող է
տալիս: Ժողովրդին ծառայող չը կայ, բոլորն
էլ հրամայողներ են: Պարտականութիւն միջոց
պաշտօնեայ դժուար կը տեսնէք, իսկ իրանց
իրաւունքի չափն անցնող—որքան իրաւունք
են: Ի՞նչ կարող է յանդիմել՝ օրէնք լինեցնելու
սանձարձակ հերոսին: Զգուշացիր, որ քո պա-
տասխանը մտաւոր չը լինի: Մեծում են, դո-
ղանում են, կալաւ են ուտում, բայց փորձի
բողբոջ նոյն իսկ լրագրութեան միջոցով—այդ
նոյն լրագրում նա կը պատասխանէ, որ յօ-
դուածագիրը թշնամացար է վերաբերվել, որ
ինքը անմեղ գառն է եւ դեռ դատարանին էլ

կը դիմէ եւ ինքն արդարանալուց զատ, քեզ
էլ կը մեղադրէ զիջմամբային՝ զրպարտու-
թեան մէջ: Չի որ այդ տղուկները ժամանա-
կի ընթացքում փորձվել են. գիտեն՝ ինչպէս
գործնալ, անպատիւ մնալ եւ ինչ միջոցնե-
րով արդարանալ:

Վերջապէս, ասենք թէ, դու քո բողբոջ փո-
խել տուիր այդ պաշտօնեային, նրան յաղորդե-
լու է նրա նման մի ուրիշը: Դրանք սորոս-
նած, ապականված միջավայրի պտուղներն են:
Դիցո՛ք թէ մենք ունենք մի լաւ տանտէր,
ազնիւ, անկաշտ, ժամանակի ընթացքում մենք
այնպէս կը յեղաշրջենք, կը լրացնենք նրան,
որ ինքներս չենք ճանաչի: Երկու հոգի կուտւմ
ենք իրար հետ եւ, հակառակորդին յաղթելու
համար, զանազան խոստումներ ենք ստում այդ
պաշտօնեային... մէկ, երկու, տասը, թէ այդ-
պիսի գալթակեցուցիչ միջոցներով եւ թէ մեր
ստոր բամբասանքներով փչացնում, այլապա-
կում ենք ազնիւ պաշտօնեային, եւ միթէ կա-
րող ենք պահանջել, որ մի որ եւ է հասարակ
պաշտօնեայ լինի իդէալիստ, վէմի պէս անաս-
սան իր ազնւութեան, անպառնութեան մէջ:

Տարաբարդաբար, մենք ինքներս վատ ենք.
սիրում ենք, որ պաշտօնեան կոմպրոմիսներ ա-
նէ, խաթր պահէ: Այսպիսի յատկութիւններից
հետո մարդուց թէ եւ ակնածում ենք, բայց
չենք սիրում նրան: Մենք սուտ վկայութիւն
ենք տալիս, մոլորեցնում դատարանին եւ մի
եւ նոյն ժամանակ պահանջում, որ նա արդար
վճիռներ կայացնէ:

Ունենք մի տեսուչ, որ ուզում է բարձրաց-
նել դպրոցը, լաւ հիմքերի վրա դնել. մեր ե-
րեխաներին պահել է նոյն դատարանում՝ թու-
լութեան պատճառով: Փոխանակ յարգելու այդ
իրաւացի կանոնը, խնդրում, պահանջում ենք,
որ նա խաթր անէ մեզ, բացառութիւն կազմէ
մեզ համար... Ո՞վ է խախտում, զարգաց-
նում մի ծառայողի, մի չնչին հրամանակատա-
րի կաշառակերութիւնը, եթէ ոչ մենք, յանձնի
ամբոխի, մասսայի, ժողովուրդ կուլված հաւա-
քածուի: Մի գործակալ ասում է, որ այս ինչ
աղջիկը չի համար տղայիդ, որովհետեւ չհաս է,
բայց եթէ 25 ռուբլի տաս, կը դառնայ հաս:
Ես տալիս եմ այդ չնչին գումարը՝ նպատակաւ
հասնելու համար եւ այդպիսով խախտում եմ
կաշառակերութիւնը: Հետեւեալ դէպքերում
նա աւելի վստահ եւ աւելի պահանջլուտ է
դառնում: Բայց եթէ ես չը տամ, դու չը տաս,

գուր էք ասում, պարզ է եւ կենսուրախ, իսկ
մենք հասկացել ենք, որ ջիւղ արեգակը խիստ
է բաց անում մեր վերքերը, մեր խոցերը. նա
չէ տաքացնում մեր սիրտը եւ չէ փարատում
մեր հոգու խաւարը: Այո՛, այո՛, այդ այդպէս է:
Դուք հաւատում էք բարուն եւ սպասում
էք այն վայրկեանին, երբ բարութիւնը կը յաղ-
թէ չարութեան, իսկ մենք ծիծաղում ենք
ձեր այդ հաւատի վրա, մենք համոզված ենք,
որ արդէն չարը յաղթել է... հաւատաւ, ասում
եմ քեզ, որ նա յաղթել է... Նայիր, ինչ է կա-
տարվում շուրջը, եւ ի մի գումարեղծը բարու
եւ չարի գործերը, ձեռքը արտիդ դիր եւ ասա՛,
ո՞վ է ճշմարիտ, մենք թէ դուք...

Նա յառեց ինձ վրա իր թափանցող հայեացքը.
այդ հայեացքը ինձ այրում էր, տանջում էր
ինձ. նրա մէջ երեւում էր երկիւղ, նրա մէջ
փայլում էր աղերսանք:

Այժմ լսիր... Դուք անվերջ խօսում էք
սիրոյ համար: Մէր դէպի մարդիկ, մէր դէպի կա-
նաչք, մէր դէպի երեխաներ, ծնողներ եւ այլն:
Ասա՛ ինձ, բարեկամ, դու զգացել ես այդ սէրը,
դու փորձել ես քեզ վրա նրա փառաբանքը,
նրա ջերմութիւնը... Ասա՛, աղաչում եմ, ասա՛
ճշմարիտը:

Դու լուռ ես... դու խօսք չես գտնում
պատասխանելու... կը պատասխանեմ ես...
Մէր չը կայ... Դա խօսք է, դա կեղծիք է.
դուք ինքներդ ձեզ խաբում էք, ձեզ հիպնո-
սացնում էք... ինչպէս էք սիրում դուք մարդ-
կանց... Դոյութեան յաւանական կաւում,
խաբուսիկ բաղդի ետեւից ընկած, դուք ունեմ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԻՒԱՆԴԱՅԻՆ ՄԱՐԴԻԿ

(Գործողից)

Ի՞նչ փորձել, բայց ուրախ ճանապարհորդու-
թիւնից, որը կատարել էի Ռուսաստանում,
այնպիսով Կովկասը եւ Լիւրմը, վերադառնալով
Ստեփանօպօլ եւ շատ տիպերի լսելով, որ իմ
լաւ բարեկամներից մէկը հոգեպէս հիւանդա-
ցել է:
Դժբաղդը, դեռ բաւական երիտասարդ մարդ,
ի ետանդով եւ գեղեցիկ ապագայի յոյսերով,
պատրաստվում էր բժշկական կոչում ստանա-
լու: Նա շատ էր կարգապէս, շատ գրել եւ հիւս-
նայի էլ երաժշտագէտ էր:
Մի քան օրախ, զուարթ, սիրված բոլորից, իմ
բարեկամն հաւատում էր մարդկանց եւ նրանց
սիրում: Նրան երբեք չէին տեսել տխուր, մե-
նակ եւ յանկարծ... Ողորդ խելագարութիւն,
հոգեկան արտամութիւն եւ յետոյ «տանջող»
ներքին հիւանդանոց:
Բարեկամիս խնամող բժիշկը զարմացրեց ինձ,
յայտնելով, որ բարեկամիս «արտամութեան» եւ
«չելագարութեան» վերջաւորութեան պատճառը—մե-
նակութիւնն է:
—Ինչպէս թէ մենակութիւնը, հարցրի ես:
—Այո՛, նրան մեղքից մենակութիւնը, այն
համոզմունքը, որ նա մենակ է եւ որ բոլոր
բժշկականները նրա համար օտար են:

Ձարմանալի եւ անհասկանալի էր թուում ինձ
այս բոլորը: Ես երեւակայել չէի կարող, որ
մէկը մշտապէս չը խաբարված լինելով մարդ-
կանցով, իրան սիրող ընկերներով, ծնողներով,
մշտապէս ուրախ, երջանիկ, սիրով եւ ախտոյ-
ժող աշխատող եւ յանկարծ զգալ իրան մե-
նակ Ո՛հ, այստեղ անպատճառ ուրիշ բան կը
լինի:

Ես որոշեցի գնալ հիւանդանոց եւ տեսնել
բարեկամիս հետ, որը այնքան ուրախ էր սկսել
իր կեանքը եւ այդպէս տխուր էր վերջացնում
իր երկրաւոր գոյութիւնը:

Իրաւունք ստանալով այցելել իմ անբախտ
բարեկամին, ես գնացի հիւանդանոց: Իմ բարի
բարեկամն գտնվում էր մի առանձին բաժնի-
մուշուրում՝ հրաշալի գեղեցկադէմ մի երիտա-
սարդի հետ:

Բարեկամս ինձ ճանաչեց. նա յամբարայի,
երբեմն կանգ առնելով, մօտեցաւ ինձ եւ յոգ-
նած մեկնեց ինձ իր ձեռքը:

—Է՛հ, բարեւ... գիտե՞ս ես որտեղ եմ:
Համաճայն բժշկի նախագահույցս, ես աչ-
խատում էի լինել հանգիստ եւ, որքան հնար է,
մեղմացնել խօսակցութիւնը:

—Ո՞րտեղ... հիւանդանոցում... կառողջանալ,
դարձնալ կը գաս մեզ մօտ, քեզ սիրող եւ գը-
նահատող մարդկանց մօտ:

Բարեկամս բարձրացրեց ինձ վրա իր տխուր
աչքերը, հիւանդոտ ժպտաց եւ հանդարտ շար-
ժեց գլուխը:

—Դուք բժշկվեցէ՛ք, իսկ ես առողջ եմ: Բը-
ժշկվեցէ՛ք դուք, որովհետեւ բոլորը էլ լուրջ

հիւանդներ էք: Դուք հիւանդ էք, որովհետեւ
մի ինչ որ բանի հաւատում էք, սպասում էք:
Բժշկվեցէ՛ք դուք, իսկ ես բոլորովին առողջ եմ:
—Ես էլ եմ առողջ... Կրկնեց խեղդուկ ձայ-
նով անկողնի վրա նստած երիտասարդը. այո՛,
եւ առողջ եմ, չը նայած իմ «բարեկամ»—թըշ-
նամիների բոլոր ջանքերին:

—Լսում ես, նա ճշմարիտն է ասում: Նա բո-
լորովին առողջ է. բայց մենք ձեզ մօտ ոչ մի
գործ չունենք, որովհետեւ մենք մենակ մար-
դիկ ենք: Այո՛, մենք մենակ ենք: Մենակ ենք
այդ անպիսի խալտաճամուկ ամբոխի մէջ, որը
բարձրվում է, ետում է, պտտում է, ինչպէս ճա-
գարը տակառի մէջ. ամբոխ, որը ինչ որ բան
փնտրում է, եւ ինչ որ սպասում է: Այո՛, մենք
առողջ ենք...

Հիւանդը ոգեւորվեց, աչքերը փայլում էին
կատաղի ցղով:

—Կրկնում եմ, որ ես առողջ եմ. ես հաս-
կացայ, իմացայ ինչ որ մեր շուրջը կատար-
վում է: Դու ուզում ես իմանալ, ինչ տարբե-
րութիւն կայ իմ եւ ձեր մէջ. ես քեզ բացատ-
րեմ, լսիր: Հիւանդը ջղաձգաբար սեղմեց ձեռքս,
ցնցվեց եւ սկսեց խօսել կիսաճայն, նրա կուրծ-
քը բարձրանում իջնում էր, նա ծանր շունչ
էր քաշում եւ երբեմն ջղաձգօրէն սեղմում էր
ձեռքերով իր գլուխը:

—Լսիր, լսիր եւ ոչ մի խօսքով մի ընդհա-
տիր: Մեր եւ ձեր բոլոր տարբերութիւնը մի-
այն նրանումն է, որ նոյն երեւոյթները բա-
ցարկում ենք զանազան տեսակի Դուք ողջու-
նում էք արեգակին, որովհետեւ նա, ինչպէս

երբորդը չը տայ, մենք ինքներս կը ստեղծենք կանոն, օրէնք գործակալի համար, որ հասը հաս է, չհաս՝ չհաս եւ նրա կաշառակերութեան փափագը անգոր կը լինի այս բնական օրէնքը փոխելու։ Այսպէս էլ ամեն մի գէպ-ըուս... Պատժանքն ալ տըր է կախում ունենայ ժողովրդից եւ ոչ թէ ժողովուրդը պաշտօնեայից։ Եթէ ժողովուրդը զարգացած է, ինքը կարող է հրահանգել պաշտօնեային։ Սակայն, ի մեծ ցաւ, ոչ միայն մենք չենք կարողանում խրախուսել լաւին, առաջնորդել մեզ առաջնորդողին զէպի բարին, ազնիւը, այլ ինքներս ենք նպաստում նրա փշանալուն։ Ոչ միայն մեծա-մասնութեամբ յետադուր չենք, խաւար, այլ եւ անհատներ չունենք, որ մեզ զեկավարեն, առաջնորդեն զէպի ճշմարտութիւնը, փոխարինեն անպէտքներին։

Բարի պտուղը բարի ծառի արդիւնք է։ Առաջնորդն էլ, յաջորդն էլ, տանուտէրն էլ մեր, մեր հայրերի, պապերի զաւակներն են, մեր ազգակիցները, մեր միջավայրի արտադրու-թիւնը։ Թող մենք արժանաւոր լինենք, որ մեր սերունդն էլ արժանաւոր լինի։ Այն ժամանակ միայն կարող ենք ունենալ իր պաշտօնին արի ուսուցիչ, անկաշառ տանուտէր, բարեմիտ առաջնորդ, այսպիսով մենք ինքներս կը տանք գործողին արժանաւորութիւն։

Վ. Ա. Գ. ռ. լ. ի ս

Տանակերտցի

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Թուիսի 10-ին

Տարիներ առաջ իմ մի թղթակցութեան մէջ գրել էի, թէ ցանկալի էր, որ հին գերեզման-ները պարագով կամ ցանկով պատէին, որպէս զի մի կողմից ապահովէր անմարդութիւնե-րից եւ միւս կողմից մասնաւոր մարդիկ իրանց տան տեղերը չընդարձակէին ի հաշիւ գերեզ-մանոցներին։

Այն ժամանակ իմ այդ առաջարկութիւնը ձայն բարբառոյ յանապատիւ եղաւ եւ գերեզ-մանոցները չընդարձակուեցին չինողները, առանց խղճահարկելու, զէն էին չարտուղ-ը-րերը եւ մեր պապերի ոսկորները գերեզման-ներից հանում ցրվում էին գետնի վրա։

Այս տարի, զարնան սկզբին, քաղաքային վարչութիւնը յարմար դատեց գերեզմանոցի մի մասը ցանկով պատել, ծառեր տնկել եւ ապա-գայում միացնել այդու հետ։ Այդ նպատակով այսօր գերեզմանոցի բարձրութեան վրա շին-վում է մի ընդարձակ ջրամբար։ Որի ջուրը ջրմուղ մեքենայով պէտք է Չարքազի-ձորից բարձրացնեն։

Անկեղծ շնորհակալութեան արժանի է քա-ղաքային վարչութեան ջանքը, որով գերեզմա-նոցի գոն մի մասը ազատվում է անմարդու-թիւններից եւ ապակաւութիւններից։

Բայց գերեզմանոցի ընդարձակ մասը դեռ մնում է անխնամ եւ դեռ չարունակում է ա-պականիւր։ Մարդիկ ոչ խիղճ ունեն, ոչ զգաց-մունք եւ, որ զխաւորն է, իրանք քրիստոնեա-

էք խնայում, որին չէք խաբում։ Որին էք ա-նուանում «կործան», «չնործեղով»... նրան, որը խորամանկութեան, ճարպիկութեան շնորհիւ առաջ է անցել, ոտնակոխ անելով աւելի շնորհ-ըով, աւելի արժանաւոր մարդկանց...

Դուք սիրում էք կանանց... Ինչպէս էք սի-րում դուք նրանց։ միթէ դուք ընդունում էք, որ կին է ձեր մայրը, ձեր քույրը, ձեր կինը... դուք տանջում, չարչարում էք, որ կին է ձեր մայրը, ձեր քույրը, ձեր կինը... Դուք տանջում, չարչարում էք թէ ձեզ, թէ ուրիշներին, ինչու, որովհետեւ հէնց այդ իրանք, այդ աչքերը պատկանում են ոչ թէ ձեզ, այլ ուրիշին... Դուք երգվում էք անվերջ սիրել... մինչեւ որ ձեզ պատահի մի ուրիշը, աւելի Աստուծոյ իրա-նով, աւելի գեղեցիկ աչքերով... Դուք չէք սի-րում, դուք ոխ էք պահում, դուք չարանա-խանձ էք, եւ հէնց առաջին յաղթութիւնը չչմեքնում է ձեր գլուխը, իսկ յետոյ դուք նո-րից սպասում էք հանդիպումների, փաղաք-չանքի, նորից ոխակալում էք, նորից րօպէա-կան մոռացութիւն էք փնտռում սիրոյ ար-բեցման մէջ։ Ասան, միթէ ես իրաւացի չեմ... Դուք սիրում էք ձեր երեխաներին... Աստուած իմ, դա ինչպիսի սուտ է, ինչ երեսպաշտու-թիւն... Ինչու ուրեմն այդպէս հիւանդ է մեր սերունդը։ Ինչու է մի կողմից միւսը թափա-ռում, ինչու այդպէս խղճալի են նրա գաղա-փարները, ինչու նրա հաւատը այդքան թոյլ է զէպի բարութիւն եւ ճշմարտութիւն։ Դուք էք սիրում ձեր երեխայոց, ինչու ուրեմն այդքան յաճախ դուք ձեզ համար ամենախնայող, ձեր

ներն են կեղտոտում այն նուիրական վայրը, ուր թաղված են իրանց նման մարդիկ։

Մեր կարծիքով, վատ չէր լինի, եթէ մեր հո-գեւոր իշխանութիւնը լուրջ ուշադրութիւն դարձնէր այդ գերեզմանոցները վրա եւ, հետե-ւելով քաղաքային վարչութեան օրինակին, մը-նացած մասն էլ ինքը չընկալատէր ցանկով կամ պատով եւ այդպիսով ազատէր գերեզմանները ապականութիւնից։

Հին գերեզմանները չընկալատելով ցանկով կամ պատով, հոգեւոր իշխանութիւնը կունե-նար եւ այն օգուտը, որ ընդմիջտ կը սեփա-կանէր իրան, եւ այնուհետեւ ոչ քաղաքը իրա-ւունք կունենար տիրելու եւ ոչ մասնաւոր անձները։

Արդէն յայտնի օրէնք կայ, ու գերեզմանո-ցում, եթէ յիսուն տարի շարունակ մեռել չէ թաղվել, այն տեղը կարելի է քանգել, հարթել եւ գործածել տմեն տեսակ պէտքերի համար։ Այդպէս վարվել են Հին-Փիւմրու գերեզմանոցի հետ, որը յետոյ անասունների վաճառատեղի էր, իսկ լիբլին ժամանակներս մոտովում էին զարդապատկան հող դարձնել։

Մեր քաղաքը նոր կազմակերպվող քաղաք է։ նա հետզհետէ ընդարձակվում, մեծանում է լայնութեամբ եւ երկարութեամբ. ով գիտէ թէ այժմեան անպէտք համարվող տեղերն ապա-գայում ինչ կարծեսան։ Ինչու ուրեմն անտար-բեր լինել եւ անհոգութեամբ թոյլ տալ, որ ուրիշները ձեռքից խլեն։

Եթէ հին գերեզմանոցները մնացել են ան-խնամ, գոնէ ուրախալի է, որ ներկայ գերեզ-մանոցի վրա առանձին ուշադրութիւն է դարձ-րել քաղաքային վարչութիւնը եւ նախագահե-տից պատշաճաւոր թոյլտուութիւն խնդրելով, կամենում է բարեկարգել գերեզմանոցները։

Ահա այդ նպատակի համար ընտրված են մասնախմբի անդամներ, նախագահութեամբ վարչութեան անդամ պ. Յար. Բարսամեանցի։ Գործունէութեան ծրագիրն է. 1) պարագով պատել երեք զաւանդութիւնների գերեզմանոց-ները։ 2) պահնորդի սենեակ չինել եւ պահա-պան վարձել, որ հսկէ գերեզմանների մաքրու-թեան եւ պահպանութեան վրա, 3) ծառուղի-ներ բանալ ու ծառեր տնկել եւ 4) հոր փորել եւ ջրհան մեքենայով ջուր հանել ու ջրել ծա-ռերը։

Մրագիրն իրագործելու համար մասնախմբից ընտրված են Հ. Հ. Վաթիկով եւ Գեանյան, պ. պ. Յ. Մատիւնեան եւ Բէրուրեան, որպէս զի քաղաքացիներից փող ժողովին եւ անմիջապէս սկսեն գործը։ Եւ եթէ գործը զուլս դալ, ճշ-մարիտ որ այդ կը լինի քաղաքային վարչու-թեան լաւագոյն գործերից մէկը։ Մնում է մեզ ցանկալ, որ մեր քաղաքացիները համակրեն եւ աջակցեն այդ վերին աստիճանի համակրելի գործին։

Պատմական ձայնող հանգամանքների շնորհիւ մենք դեռ չունենք այն ընդհանուր հակադո-ղութիւնը, թէ գերեզմանատունը պէտք է բա-կարգ վիճակի մէջ լինի։ Մենք ոչ մի ծախս ու աշխատանք չենք խնայում զարդարելու մեր

հոգուն, սրտին, մարմնին ամենամօտ արարա-ծին թողնում էք ճակատագրի կամքին եւ հե-ռանում նրանցից ու հեռանում էք ընդմիջտ...

Նայել, ինչ է կատարվում չուրջդ։ Գանի քանի մայրեր եւ հայրեր նոյ՝ սիրոյ, նոր ար-կածների համար մոռանում են զէպի իրանց զաւակներն ունեցած սէրը եւ ձգտում են նը-րանց։ Ուր է ձեր սէրը զէպի ձեր զաւակ-ները...

Ա՛հ, անհ, ձեր սիրոյ ապացոյցները... Դուք չինել էք շատ որբանոցներ, զաղթութեան փոք-րահասակ մեղապարտների համար... Ասացէ՛ք, հայրեր, միթէ ամօթը չէ կարմրեցնում ձեր երեսը, երբ չինում էք դուք բոլոր այդ որբա-նոցները, եւ հաստատութիւնները... Ասան, մի-թէ դա ամենալաւ ապացոյց չէ, որ չը կայ այլ եւս սէր զէպի զաւակները... Որ դուք ձեր մարմնի ու արեան թշնամի էք... Ի՞նչն է ա-ռաջ բերել ընկեցիկ, թշուառ, ոճրագործ ե-րեխայոց լէգէօններ, եթէ ոչ ձեր քաղաքատու-թիւնը, ձեր սերունդը...

Դուք սիրում էք ձեր կանանց... Ի՞նչ զգուշե-լուտ է... Ինչպէս էք սիրում դուք նրանց... Տայով նրանց կանքի մէջ յարմարութիւններ, գնելով նրանց համար գլխարկներ, չընդգրգեալներ՝ դուք բռնանում էք, դուք տանձ էք դնում նրանց մտքերի, նրանց զգացումների, նրանց սրտի վրա։ Նրանք պարտաւոր են ձեզ հաւատարիմ լինել, որովհետեւ դուք նրանց ամուսինն էք... Նրանք պարտաւոր են ձեզ սիրել, որովհետեւ դուք պնդում էք նրանց բնակարանի եւ գերեզման-հինքի վարձը։ Միթէ դուք անում էք հոգեկա-

ծախանակաւոր քնակարաններ, այն ինչ մեր սիրելիների յախտեանական հանգստարանը ձգված է անխնամ։ Մենք մեծածախս կոթողներ ու արձաններ ենք կանգնեցնում նրանց վրա, մինչդեռ անյայտ, չարագործ ձեռքեր ան-գութ կերպով կոտորատում, փշրում, գետնի են տապալում նրանց։ Չը կայ գերեզմանոցում մի ծառ, որի ստորեկի տակ մարդ զովանայ, չը կայ ջուր, որ ծարաւը կտորէ։ Շուրջը ամեն կողմ տիրում է ապականութիւն։

Իսկ այդպէս են օտարների գերեզմանատները։ Ամենեւին ոչ հէնց Թիֆլիսում կաթօրիկների, գերեզմանոցների, նոյն իսկ հայերի Խօջիվանքի գերեզմանատները ունին պահապաններ, որոնք պահում են օրինակելի մաքրութիւն գերեզմա-նոցներում։ այնտեղ անցնողն են ծառեր ու ծաղիկ, որոնց թաւ ստուերների տակ յախտե-նական քնով հանգստանում են ննջեցեալները։

Կարելի է միթէ պարզ երեսով համեմատել մեր գերեզմանատները օտար քաղաքների բա-րեկիթի հասարակութիւնների գերեզմանատնե-րի հետ։ Ուրեմն մենք էլ աշխատենք նմանվել նրանց։ Լաւ է ոչ, քան ոչ երբէք։

Ներսէս քահ. Նիկողոսեան

ՆԱՄԱԿ ԶԱՆԳԵԶՈՒԻԻ ԳԱԽԱՌԻՑ

Խնձորէակ գիւղ, յուլիսի 8-ին

Խնձորէակ գիւղացի Յովակիմ Լալազարեանցի՝ 1860-ական թուականներին Բարդիշատ գետի վրա կառուցած քարէ կամուրջը քայքայված էր, անպէտքացած։ Այժմ նա վերանորոգված է եւ արդէն համարեա պատրաստ է։

Վերանորոգողը հանգուցեալի որդի Սիմէօնն է. նրա ծախսով ճիշտ տարի ու կէս է, ինչ աշխատանքներ էին կատարվում կամուրջի վե-րանորոգութեան վրա։ Ինչու, Սիմէօն Լալազարե-անցը, անձամբ հսկում էր այդ գործի վրա։ Թէ ինչ բարեբարութիւն է դա տեղական ազ-գաբնակչութեան համար, կարելի է խմանալ, աչքի առաջ ունենալով, որ Լալազարեանցի կա-մուրջն է, որ հաղորդակցութեան միակ յար-մար եւ անմիջական ճանապարհ է կազմում Ղա-փան, Բարդիշատ, Միսիւսի գաւառամասերի համար Գորիսի եւ Շուշու. հետո Գարնաւ ա-միսներում, երբ վարարած կատաղի Բարդի-շատը, մի հսկայ վիշապի նման, զալարվում է փրփրալէզ կոհակների զղրիւնով, իսկ ազ-գաբնակչութիւնը, որ իր աօրեայ չարիքների համար պէտք ունի հաղորդակցութեան, մասն-վում է սարսափի Գանի քանի զոհեր է կլանել Բարդիշատ գետը...

Մի եւ նոյն սոսկալի տեսարանները զարնան ամիսներում ներկայացնում են Հաքեարի եւ Չարուխ գետերը, կարելով ամիսներով Չան-գեզուր գաւառի հաղորդակցութիւնը Շուշու հետ, որտեղից ստանում է քաղաքամարդ գա-ւառի մարդը ազգաբնակչութիւնը իր ամենա-կարեւոր կենսական պիտոյնները։ Այդ պատ-ճառով է, որ լինում են ժամանակներ, երբ չաքարի, նաւթի եւ արանց նման ապրանքների

գիշումներ, միթէ դուք լսում էք նրանց սրտի բաբախումը...

Ասան, դու տեսել ես մի ամուսին, որը ա-ռանց ոխի, առանց կուի ասէր իր կնոջը, լծա-քեզ սիրում եմ, բայց զգում եմ, որ դու ու-րիշին ես սիրում... Գնան նրա մօտ, որովհետեւ ես ամաչում եմ օգուտ քաղել իմ ուժիցս, իմ իրաւունքիցս... Ես ամաչում եմ խոտտովանել, որ իմ քեզիցից ստացած փաղաքշանքը բաժան-ված է եւ որ քո սիրտը թէւեւ րօպէապէս, բայց ազնուութեամբ պատկանել է ուրիշին... Գնան... Գնան, որովհետեւ թէ ինձ եւ թէ քեզ համար մեր ապագայ կանքը կը լինի միայն բարոյական տանջանք, չարչարանք... Գնան այն պատճառով եւս, որ ես չեմ ուզում բռնաբարել ուրիշի հոգին, ուրիշի սիրտը։

Դու տեսել ես այդպիսի ամուսին, ես դեռ չեմ հարցնում—ամուսիններ։

Իսկ ձեր կանայք... միթէ նրանք կարող են սիրել, տանջվել, միթէ նրանք ունեն ազնիւ, մաքուր զգացումներ...

Իմ հիւանդ բարեկամս քաջ գցեց իր գլուխը ու լռեց։ Մանր էր չնչում նա։ Դժուար էր նա-յել նրա տանջվող երեսին։ Նա հաւատում էր բոլոր իր ասածին եւ իր մտածածի համար էլ տանջվում։ Նա չէր հասկանում, որ իր բերա-նով հերետիկոսն է խօսում։ չը գիտէր, որ հէնց այդ ցնորդի համար էլ ընկել էր հոգեկան հիւանդների բուժարանը։ Ես հասկացայ, թէ ինչպէս է մեծանկութիւնը նրան անցնելու եւ զգացի, որ նա իսկապէս մեծանալ է։

Նա զատարկ բաներ էր դուրս տալիս. նա

գնեք բարձրանում են Չանգեզուրում երկու անգամ սովորականից աւելի։

Որքան մեծ կարիք է զգում ժողովուրդը երկու անարկու գետերի վրա էլ կամուրջ ունենալու։ Ձի անցնում չարաթ, ամուսին ծով դարձած Հաքեարին եւ Չարուխը չը զեն իրանց սառն խորշերում ապրանքնե-րեւաւորված գրաստները, ինչպէս նաեւ մար-կանց։

Որքան ցանկալի կը լինէր, որ տեղական կա-պիտալիստները, միլիոնատէրերը, հետեւե-լ պ. Սիմէօն Լալազարեանցի օրինակին, չինե-կամուրջներ եւ Հաքեարի ու Չարուխ գետերի վրա։

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Հին-Ղրիմ, յուլիսի 2-ին

Վերջին ժամանակներս կարծես ընդող լեռ-ւոյթ է դարձել մշտնադւր մի տխուր հանգե-մանը, որ թէ հասարակութեանը եւ թէ մե-նաւանդ խմբագրութիւններին գցում է մոռ-րութեան մէջ։ Այդ ցաւալի երեւոյթը ասո-նքով է, որ մեր գաւառական լրատուներից չը տեսնեն, որոնք կամ անձնական հաշիւները գրգռված եւ կամ բնութեւն չը լինելով լրագր-թեան այնքան մեծ նշանակութիւնը (այն ժողովրդի բոլոր խաւերում մեծ հեղինակու-թիւն վայելող լրագրի), գրում են առանց որ եւ է փաստի, որ դրանով հասարակ-թեան մէջ առաջ են բերում արդարացի վե-րափոխւած ոչ թէ զրպարտող անհատների, ա-զգաբնակչութեան, խմբագրութեան դէմ։ Ահա երեւոյթը, որ իսկապէս խմբագրութիւնը ան-կարող է արմատախիլ անել։ Նա հաւատում նրանց, հիմնվում է այդ անձանքի լրատուների ազնուութեան վրա, սակայն վերջիններս, առանց խղճի խայթող զգալու՝ մոլորեցնում են իրանց հատասցողներին, որի շնորհիւ խեղաթիւ-րվում է բազմաչափար ճշմարտութիւնը եւ տու-ծում է հրապարակական քննադա՞ր ժողովրդ-չանքին անկեղծաբար ծառայող օրգանը...

Դիմելով փաստերին, ես ուզում եմ խօսքը մասնաւորել մի լուրի վրա, որ տպված էր «Մշակ» № 133-ում՝ Հին-Ղրիմ քաղաքի որովհետեւ՝ իբրեւ ընկի հին-գրիցի՝ ես չառ-լաւ ծանօթ եմ մեր քաղաքին եւ նրա մէջ առ-րող հասարակութեան հետ։

Պ. լրատուներ գրում է. «Հին-Ղրիմ քաղաք-ներկայացնում է մի ամալի անապատ, ոչ եր-թեւեկութիւն կայ, ոչ կաղերի գողոց, ոչ չների հալոցք։ Ինչպէս երեւում է, վերջինի տողերի հեղինակը կամ բոլորովին չէ եղ-Հին-Ղրիմում եւ կամ ցանկացել է սուտ գրի առանց ամաչելու։

Հին-Ղրիմը ներկայացնում է ոչ թէ ամալ անապատ, այլ այնպիսի մի բուսականութեան (մասնաւոր իրերէ կուրորտ) ճոխ երկիր, որ ամառ թէ ձմեռ նա զմայլեցուցիչ է եւ գուցէ շատերը նախաձէին նրա բնակիչներին։ Այդպիսով չէ լսել չների հալոց՝ այդ գուցէ ճիշդ է սակայն ինչու նա այդ երեւոյթի վրա ուշադրու-թիւն է դարձրել թողնում եմ իրան խմանա-լու... Անուշեւտեւ պարտեւ ասում է, թէ քա-ղաքի բնակիչների մեծ մասը հայերն են։ Այդ էլ սուտ է։ Այստեղ ընդամենը 60—70 տոն հայեր հազիւ լինեն. իսկ բնակիչների թիւը մոտաւորապէս 5000 է։ Յետոյ՝ իբր թէ քա-ղաքը յետադիմում է՝ որովհետեւ «ունեցել է

բարոգում էր կեանքի եւ մարդկային բարոյ-կանութեան մէջ անգործադրելի բաներ։ Եւ իսկապէս մեծակ էր, որովհետեւ նրա միջ-ցնորը շատերի մէջ արդեօք համակրութիւն կը գտնի։ Ո՛ւմ մէջ...

—Այժմ, գնաւ բարով, ասաց նա ինձ, գնա չարչարվել, յուզվել եւ զորան քո կեանքի համար։ Թէ դու, թէ ես, թէ մենք, թէ նրանք, ուր կամ շուտ կը գանք մի վախճանի. մեզ քո լուրի կը տանի ամենալալով մահը եւ բոլոր միակերպ կը քնենք խորը, անարթնանալի ըն-նով։ Բոլորս կը մասնվենք յախտեանական ան-խախտ մոռացութեան... Մի քանիսը կը գնան այնտեղ առողջ, իսկ ուրիշները հիւանդ... Եւ անքից յետոյ, անգնից ով կը լինի իրաւա-ւոր եւ որին համար աւելի հեշտ կը լինի կեանքի բաժանվել...

Հիւանդը լռեց։ Անկողնի վրա նստած երիտասարդը նայում էր ինձ յաղթական հայեացքով, կարծես ին-հարցնելու լինէր։—Հասկացար, ով է իրաւաւոր եւ հիւանդանոցից դուրս եկալ։

Արդէն բաւական ուշ էր. ըստ սովորական խնդրված էին մարդիկ, կառապանները բո-լորովին միմեանց առաջ կտրելու. ամենքն էլ բոտ երեւոյթին իզուր չէին շտապում, ա-գործով։ Ես ակամայ յետ նայեցի զէպի հիւան-դանոցը, որտեղ նստած էր անհակութիւնի տանջվող իմ խեղճ բարեկամս։

Ն. Տէր-Կարապետեան

Ասխաբադ.

Электропечатня Грива, Ивалт, Тинва, Б.-Ванкская ул.